Հարցազրույց 10:47, 23 հունիսի 2011

# Ըստ Ե. Զորյանի՝ Հայկական վիրտուալ համալսարանը երկամյա կրթական ծրագրի առաջին շրջանավարտները կտա

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայկական վիրտուալ համալսարանը բացառիկ փորձ է ժամանակակից տեխնոլոգիաների հրամայականի համաձայն տարածելու հայկական կրթությունը եւ հայազգի ու այլազգի երտասարդների մեջ սերմանելու հետաքրքրություն դեպի հայերենն ու Հայաստանը: Այս տարվա ընդունելության եւ ուսումնական ծրագրերի ու նախաձեռների մասին «Արմենպրես»-ը զրուցել է Հայկական վիրտուալ համալսարանի հիմնադիր եւ նախագահ Երվանդ Զորյանի հետ:

**-Հայաստանում այս ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններում դիմորդների թվի անկում կար՝ կապված շրջանավարտների բացակայության հետ: Ինչպիսին էր Հայկական վիրտուալ համալսարանի նկատմամբ հետաքրքրությունը դիմորդների շրջանում եւ դիմելու ինչ ընթացակարգ կա:**

-Հայկական վիրտուալ համալսարանի ընդունելության ձեւաչափը որոշակիորեն տարբերվում է ընդունված նորմերից: Ընդունելությունն իրականացվում է տարին չորս անգամ՝ քառամսյակային համակարգով: Ստացում է, որ հաջորդ ընդունելությունը կիրականացվի այս ամառ ու կսկսվի հուլիսի 4-ից: Հայկական վիրտուալ համալսարանում ընդունվել ցանկացողների քանակի սահմանափակում չկա. կարող են դիմել ու ընդունվել բոլոր ցանկացողները:

**-Գրեթե երկու տարի է, ինչ գործում է Հայկական վիրտուալ համալսարանը: Ինչպիսին է հետաքրքրությունը նրա նկատմամբ եւ քանի՞ ուսանող է մինչ այժմ դիմել:**

-Հայկական վիրտուալ համալսարանը իր գոյության գրեթե երկու տարվա ընթացքում արդեն ապացուցել է իր առավելությունները ու դրանով է պայմանավորված, որ վերջերս մենք ունեցանք մեր 1000-րդ ուսանողին: Դա ապացուցում է, որ թվային տեխնոլոգաներին առաջնություն տվողների թիվը մեծ է, եւ Հայկական վիտուալ համալսարանը ժամանակավրեպ նախագիծ չէ: Այս կրթօջախը կարող է հսկայական նշանակություն ունենալ հայկական կրթական համակարգի հետագա զարգացման գործում:

**-Ո՞ր երկրներից են ամենաշատ դիմորդները:**

-Հայկական վիրտուալ համալսարան դիմողների կողմից ձեւավորված երկրների առաջին հնգյակը հետեւյալ տեսքն ունի՝ ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Արգենտինա եւ Վրաստան: Ընդհանրապես դիմողների աշխարհագրությունը շատ մեծ է, ու դիմորդների կողմից ձեւավորված ցանկում արդեն կան քառասունից ավելi պետություններ:

**- Կա՞ն օտարազգի ուսանողներ:**

- Այո՝, եւ նրանց թիվը փոքր չէ: Նրանց ցանկությունը սովորելու Հայկական վիրտուալ համալսարանում հիմնականում պայմանավորված է ընտանեկան կապերով, բիզնես հետաքրքրություններով Հայաստանում, ինչպես նաեւ կան պարզապես հայկական կրթական եւ այլ ոլորտներով հետաքրքրվող ուսանողներ:

**-Կրթական ծրագրերի հեշտացման ու բարեփոխման նպատակով ինչպիսի՞ փոփոխություններ են սպասվում:**

-Այս տարի մենք մի քանի նորամուծություններ ենք կատարել կրթական ծրագրերի ինտերակտիվ մատուցման ուղղությամբ: Միաժամանակ կրթական ծրագրերի բարեփոխումների հետ, ավելի են ընդլայնվում կուսերի ցանկը, ինչպես նաեւ սկսել ենք վերանայել նախկին ուսումնական թվային ձեռնարկների պարունակությունը, բովանդակությունն ու մատուցման որակը: Եթե դիտարկենք նաեւ թվային ծրագրերի ու նյութերի քանակը, ապա փաստ է, որ տարեցտարի նմանների թիվը բազմապատկվում է ու այժմ մենք մի քանի անգամ ավելի շատ թվային ուսումնական ձեռնարկներ, նյութեր ունենք, քան սկզբնական շրջանում: Միաժամանակ, ընդլայնվել ու դյուրացվել է դրանց համադրումն առցանց ուսուցման համար:

**-Ե՞րբ են սպասվում առաջին շրջանավարտները:**

-Իհարկե, Հայկական վիրտուալ համալսարանը դեռեւս չունի շրջանավարտներ: Դեռեւս չի լրացել մեր գոյության երկու ամյակը ու նման կարճ ժամանակահատվածում ավարտողներ ունենալ, պարզապես անհնար է: Սակայն